

ՏՆՕՐԻՆ - ԻՄՐԱԳՐԱՊԵՏ  
ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒՅԻՒՆ

ՏԱՐԵՆԱՆ 500 ՂՐԸ  
ՆԵՑԱՍՏԵԱՅ 250  
ԵՌԱՍՏԵԱՅ 150

Բաժանորդագրութիւնը կ'սկսուի  
ապրիլ 1-ին և 45 ր



ՌԵԴԱԿՏՈՐ - Մ. ՄԱՍՈՒՐԵԱՆ

Fondateur

M. Mamourian

Directeur - Rédacteur en chef

H. MAMOURIAN

ARÉVÉLIAN MANOUL,  
JOURNAL ARMÉNIEN  
QUOTIDIEN

100 ՓԱՐԱ

ՕՐԱԹԵՐԹ ԱՂԳԱՅԻՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

100 ՓԱՐԱ

### ՔԱՂԱՔԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Փրեթէ բոլոր պատերազմիկ պահութիւններն զբազան են այս պահուս  
իրենց ներքին երեսմասկան խանդարտած պիւտեճէներու հաւասարակշռութեան  
խնդիրներով:

Ամէն կողմէ կ'հասնին ժողովրդային գանձաւորներ ու բողոքներ դրամական  
անկումներուն, ու տեսակէնի նուազութեան, վատելքի չգոյութեան:

Անգլիական խորհրդարանն սկսաւ իր աշխատութիւններուն և մինչև  
ծնունդ իր օրակարգին բնականորեւն է շատ մը կենսական հարցերով, որոնց  
լուծումը պիտի աշխատի ընել, մինչև սոյ թուականը Առաջին խնդիրն որ  
վիճարանութեան դրուած է հոն, երեսմասկան պիւտեճի խնդիրն եղած է և  
այս անգամ Լոյս ձորձի գահիճն Չախլախի մեծամասնութեամբ մը յաղթա-  
կան դուրս ելած է այդ վիճարանութիւնէն:

Ինչպէս կ'տեղեկանանք Եւրոպական թերթերէ, Լոյս ձորձ, ցարդ նման  
չստանաւ պերճասուս ու արտաբանութեամբ խտացած ճառով մը սուինք-  
նամ է հասարակաց խորհրդարանն և վատարութեան քուէ ստացած:

Անգլիա այս վերջին ամիսներուն մէջ գրեթէ պատերազմէ տառ իր ունե-  
ցած կայսրութեան մէջ գնել յանդիման է իր նաւատարներն, բանակն և այս իսկ  
պատճառաւ նախարարական գահիճն և ստացած է իր բնական վիճակն  
Չի իջնելով նախարարաց խորհուրդի և շնչելով պատերազմական խորհուրդն  
և կարգ մը ուրիշ խորհուրդներ, որոնք նախարարական կողմին հետ թէև  
առնչուած, առանձին փոքրիկ նախարարութիւններ կ'կազմէին իրենց խոր-  
հրդականներով և պաշտօնէութեամբ:

Իսկ երեսմասկան մասին Լոյս ձորձ հաւասարած է թէ յառաջիկայ շրջանին  
առանց նոր տուրքերու պիտի չաջողի հաւասարակշիւ պիւտեճն և յիսուն  
տարուան շրջանի մը մէջ հանրային պարտուց գումարն պատերազմէ տոջի  
վիճակին վերածուի:

Բացի ամեն երկիրներու այսօրինակ տագնապներէն, ամենց վրայ կուգայ  
կ'բարդուի նաև Ֆրանսիայի և Իտալիայի երեսմասկան ընտրութեանց պայ-  
քարն, պայքար մը որ համեմատաբար աւելի մեղմօրէն կ'յուզուի Ֆրանսայի  
մէջ քան Իտալիայ: Լուծման իր ընտրողներու առջև արտասանած իր ճառով  
հրաւեր կ'կարգայ ժողովուրդին չկորսնցնել իր պաղարիւնութիւնն և ամեն  
ժամանակ աւելի սերտօրէն կապուած մնալ, որպէսզի սղգային կենսունակ  
ոյժն չկորսուի որու ոյժով միայն Իտալիա պիտի կրնայ ցոյց տալ աշխարհի իր  
մեծութիւնն ու արժանիքը:

Ֆրանսական խորհրդարանն պատերազմի պահուն իր դանդաղ նիստերու  
առնակարգութիւններն սկսած է հրատարակել, որոնք թէև իրենց մասնաւոր  
չահեկանութիւնն ունին, քաղաքական ու պատերազմական ինչ ինչ հարցերու  
յայտնութեամբ, բայց աւելի ընտրական գործողութեանց վրայ ազդելու նպա-  
տակով հրատարակութեան արուած կ'երեւին: Այդ վաւերութեան կամ  
նիստերու առնակարգութիւններէն լոյս կ'տեսնեն միայն այն մասերն, որոնք  
որոշ ֆրանսական քաղաքականութեան հետ կապ ունին և որ և է գաղնակից  
պետութեան հետ առնչութիւն մը չունին:

Իսկ Հայաստանի Համաժողովն իր գոյութեան արագոյցներն գտնուած է  
առէ, որոշ ժամանակէ մը ի վեր: Այս լուսութիւնն կ'վերադարձի Մ-Նահանգաց  
կողմէ գեւ որոշ քայլ մը առնուած չլլ ուրեւ Վէրսալի գաղնագրի մասին:

Առայժմ Համաժողովի գանձաւոր յանձնաժողովներն կ'զբաղին երկրորդա-  
կան խնդիրներէ զատ նաև իրենց հասած ինչ ինչ խնդիրներու վրայ արբ-  
ուած տեղեկագիրներով, որոնց մէջ մեզի համար շահեկան կրնան նկատուիլ  
Զօր. Հարսլըրտի տեղեկագիրն Հայաստանի ու Թուրքիայի յանձնաւորութեան մա-  
սին, ինչպէս նաև Իզմիրի գործոց մասին արուած տեղեկագիրն, որու վիճա-  
բանութեան լաւ իւս է ըսել, խորհրդակցութեան մասնակցած է նաև հիլլէն  
նախարարապետը և անշուշտ հարկ եղած տեղեկութիւններն հաղորդած և  
միեւնոյն ժամանակ յայտարարած թէ՛ Իզմիրի գրուումն իր բարերար ազդե-  
ցութիւնն ունեցած է և քրիստոնեայ տարրն որ և է ամենաթեթեւ գժգոհութիւն  
մը իսկ չկրնար ունենալ:

Ասոնցմէ զատ Գերագոյն Ժողովն կ'զբաղի Թուրքիայի ներքին գաւառներու  
մէջ տիրող չփութութիւններով և թուրք ազգայնական շարժումն անուան տակ  
ի գործ դրուած այն կարգ մը գաղապարաւոր իրողութիւններով, որոնք կը  
ճնշեն մասնաւորապէս հայ տարրին վրայ:

Համաձայնական տէրութիւններն անշուշտ հարկ եղած միջոցներն ձեռք  
պիտի առնեն մտերմ մի անգամ ինչ միջոց վերջ մը գնելու համար այս անբա-  
տոյց վիճակին, որ հետզհետեւ սպառնալից երեւոյթ մը կ'ստանայ:

Իսկ գաւառային անկուս-ֆրանսական վերջին կարգադրութեան, կարգ մը  
ֆրանսական թերթեր կ'պնդեն թէ՛ այդ համաձայնութիւնն վերջնական հան-  
գամանք ունի և եթէ Անգլիա իր զորքն ետ կանչելով՝ տեղ կուտայ ֆրան-  
սական զորաց, և այսպէս այս վերջիններն իրենց ազդեցութեան շրջանակն  
կ'տարածեն Պէրսիայի հարաւարկողէն գէպի Հալէպ գաւառ թողնելով այս քա-  
ղաքն և կ'տարածուին Ուրբայի հարաւարեւելքէն մինչև Տիւրքիայի և  
հիւսիսէն ուղիղ գծով դէպի Սլովակ և անկից գէպի հարաւ Մէրսին:

«Թան» կ'հաւասարէ իրազեկ ազդեցութիւնէ քաղելով իր տեղեկութիւններն,  
թէ՛ Անգլիա շատ վեհանձնօրէն վերաբերուած է այս խնդրոյն մէջ և ամեն  
թիւրիմացութիւն փարտատած, սակայն ֆրանսական այդ գրաւումն ու ժամայ  
հանգամանք մը ունի և վերջնական վճիռն պիտի արձակէ Հայաստանի Հա-  
մաժողովն, երբ սկսի Թուրքիայի հարցին քննութեամբ:

Պատճառ մը չունիք չհաւատարու «Թան»ի այս հաւասարումին, որ ընդ-  
հանրապէս իրազեկի համբաւն չիմած է, ուղղակի չիման մէջ ըլլալով խոր-  
հրդարանական և նախարարական շրջանակներու հետ:

Իսկ այս համոզումին մէջ եւս աւաւել ամրապնդուելու պատճառներ  
ունինք, երբ նկատի առնենք որ կիկիկիոյ ֆրանսական զինուորական իշխա-  
նութիւնք, ամեն տեսակ գիւրութիւն և բարեպաշտութիւն ի գործ կ'գնեն  
Հայոց գոհացում տալու, անոնց ամեն խնդիրներուն մէջ, ինչպէս որ վերջինս  
սիրայօժար հաւանած և պարտաւարակութիւն յայտնած են՝ Պէրսիայի որ-  
բանոցի փոխադրութեան համար եղած առաջարկին ի նախընդմէ:

Վերջին խօսքն սովայն կ'մնայ Մ. Նահանգաց Որչափ ժամանակ որ  
չճշդուի այդ մեծ հանրապետութեան դիրքն և որչափ ժամանակ որ ձեռա-  
կոյան տեղի չտայ և նախագահն իր յաղթանակը կատարելու չընէ կ'սկսինք  
տարակուսիլ թէ՛ անորոշութիւնն պիտի մշտնջենաւ որու և դժբաղդարար  
պիտի աշխատին այդ անորոշութիւնէն օգուտ քաղել մոթ խաւեր, որոնք  
համաձայնական մեծ պետութեանց թեթեւ թայտուութեան կ'խրախուսին և  
կ'սկսին մեծամեծ ցոյցեր ու ակնկալութիւններ ունենալ:

Նոր աշխարհի ծերակուտականներն այստեսակ ծանր պատասխանատու-  
թեան մը տակ պէտք չէին մտնել և զուտ կուտակցական խնդրի մը խաղա-  
լիք դարձնել ամբողջ աշխարհն, որ արագօր ու հեծնե կ'հետեւի անոնց մէջ  
մի խօսքին, մէջ մի շարժումին և ակնդէտ կ'սպասէ իրենցմէ իր փրկու-  
թիւնը:

Հ. Մ.





